# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**21 ապրիլի 2025 թվականի թիվ 830-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 80-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետի, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով, որ 2025 թվականին նշվում է Հայրենական Մեծ պատերազմում տարածք հաղթանակի 80-ամյակը և Սևանի համայնքապետարանի կողմից մշակվել է հոբելյանական միջոցառումների ծրագիր, **որոշում եմ.**

1. Հաստատել՝
1) Սևան համայնքում Հայրենական Մեծ պատերազմում տարածք հաղթանակի 80-ամյակին նվիրված մարզական առաջնությունների կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2) Սևան համայնքում անցկացվող սեղանի թենիսի համայնքային առաջնության կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3) Սևան համայնքում վոլեյբոլի համայնքային առաջնության կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելված 3-ի:
2. Հանձնաժողովի նախագահին՝
1) Ներկայացնել անցկացվող համայնքային առաջնությունների կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն մինչև ապրիլի 30-ը:
3. Համայնքային առաջնություններն անցկացնել 2025 թվականի մայիսի 8-ին և 9-ին:
4. Համայնքային առաջնությունների համար սահմանել մրցանակային ֆոնդ 1-ին երեք տեղերը գրված մասնակիցների և թիմերի համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 21
ք.Սևան

Հավելված 1

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝
21.04.2025 830-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 80-ամյակին նվիրված
սիրողական սեղանի թենիսի համայնքային մրցաշարի կազմկոմիտեի

Նախագահ՝ Նարինե Հարությունյան - Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵՀ բաժնի պետ
Պատասխանատու՝ Գարիկ Ավետիսյան - «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն
Կազմակերպիչ՝ Վիկտոր Կրեչին - «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի փոխտնօրեն
Մրցավար՝ Հովիկ Վարդանյան - «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիչ
Գլխ. մրցավար՝ Գոհար Ավետիսյան - «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի թենիսի մարզիչ
Կազմ կոմիտեի անդամ՝ Աննա Մովսիսյան - Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵՀ բաժնի գլխավոր մասնագետ

ԿԱԶՄ

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 80-ամյակին նվիրված վոլեյբոլի
համայնքային մրցաշարի կազմկոմիտեի

Նախագահ՝ Նարինե Հարությունյան - Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵՀ բաժնի պետ
Պատասխանատու՝ Գարիկ Ավետիսյան - «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն
Կազմակերպիչ՝ Վիկտոր Կրեչին - «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի փոխտնօրեն
Մրցավար՝ Անժելա Դավթյան - Սևանի թիվ 5 միջն.դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչուհի
Գլխ. մրցավար՝ Հակոբ Դավթյան - «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի վոլեյբոլի մարզիչ
Կազմ կոմիտեի անդամ՝ Աննա Մովսիսյան - Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵՀ բաժնի գլխավոր մասնագետ

Հավելված 2
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝
21.04.2025 830-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 80-ամյակին նվիրված սիրողական սեղանի թենիսի համայնքային մրցաշարի

## ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Սևանի համայնքապետարան, «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ

## ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սան համայնքում սեղանի թենիս - մարզաձևի մասսայականացում, բնակչության շրջանում, առողջ ապրելակերպի պրոպագանդում.

2. Անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, առողջության ամրապնդում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում:

## ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ

Միջոցառումը անցկացվելու է ս/թ մայիսի 8-ին՝ ժամը 17:00-ին, «Սևան համայքնի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ում:
Մասնակիցները պետք է ներկայանան ժամը՝ 16:30
Ն.Դագարյանի անվ. մանկապատանեկան մարզադպրոց,
ք. Սևան, Նաիրյան 128, հեռ. 094878584, 077101775

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Մարզական միջոցառմանը մասնակցելու համար հայտ կարող են ներկայացնել 20-ից բարձր տարիքի աղջիկներ և տղաներ:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Մրցաշարի կազմակերպման և մրցանակային ֆոնդի ծախսերը հոգում է Սևանի համայնքապետարանը:

Սևան համայնքի բնակավայրերի մասնակիցների տեղափոխումը կազմակերպվում է մասնակիցների միջոցով:

## ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Մրցաշարի 1-ին,2- րդ 3 -րդ տեղերը գրաված մասնակիցները կստանան դրամական պարգև և պատվոգրեր, համայնքի ղեկավարի կողմից:

## ՀԱՅՏԵՐ

Հայտերը ներկայացնել մինչև ս/թ մայիսի 4-ը «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ

Հավելված 3

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝
21.04.2025 830-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայրենական Մեծ պատերազմում տարածք հաղթանակի 80-ամյակին նվիրված վոլեյբոլի համայնքային մրցաշարի

## ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Սևանի համայնքապետարան, «Սևան համայքնի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ

## ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սևան համայնքում վոլեյբոլ մարզաձևի և առողջ ապրելակերպի մասսայականացում բնակչության շրջանում:

2.Թիմային բազմակողմանի և ներդաշնակ զարգացում, առողջության ամրապնդում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում:

## ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ

Միջոցառումն անցկացվելու է ս/թ մայիսի 9-ին ՝ ժամը՝ 11:00
Մասնակիցների մուտքը՝ ժամը 10:30-ին
Անցկացման վայրը՝ «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ
Հասցե՝ ք. Սևան, Նաիրյան 128 հեռ.094878584, 077101775

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Մարզական միջոցառմանը մասնակցելու համար հայտ կարող են ներկայացնել 20-50 տարեկան մասնակիցներից կազմված թիմեր:

Թիմերի կազմում կարող են ընդգրկվել տղաներ և աղջիկներ:

Թիմի կազմը բաղկացած է 6 խաղացողից և 3 պահեստայինից:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Մրցաշարի կազմակերպման և մրցանակային ֆոնդի ծախսերը հոգում է Սևանի համայնքապետարանը:

Սևան համայնքի բնակավայրերից մասնակիցների տեղափոխումը կազմակերպվում է մրցաշարի մասնակից թիմերի միջոցով

## ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Մրցաշարի 1-ին, 2-րդ 3-րդ տեղերը գրաված մասնակիցները կստանան դրամական պարգև և համապատասխան պատվոգրեր, համայնքի ղեկավարի կողմից:

## ՀԱՅՏԵՐ

Հայտերը ներկայացնել մինչև ս/թ մայիսի 6-ը «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**21 ապրիլի 2025 թվականի թիվ 831-Ա**

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Յուրի Մարգարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի. ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ Գործակալության Սևանի տարածքային բաժնի կողմից տրված մահվան պետական գրանցման մասին N 236 ակտով փաստվում է, որ քաղաքացի Յուրի Միխայելի Մարգարյանը մահացել է 2009 թվականի օգոստոսի 27-ին: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջների համաձայն՝ անձի նկատմամբ սկսված վարույթը ենթակա է կարճման անձի մահվան հանգամանքով: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ**.

1. Քաղաքացի Յուրի Միխայելի Մարգարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սահմանել, որ քաղաքացի Յուրի Մարգարյանի հողատարածքի նկատմամբ վարձակալության իրավունքը իրավահաջորդությամբ փոխանցված լինելու դեպքում իրավահաջորդից պահանջել ապամոնտաժելու ինքնակամ կառուցված շինությունները:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել 15-օրյա ժամկետով վերադասության կարգով կամ վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 21
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**21 ապրիլի 2025 թվականի թիվ 832-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Հուսիկ Սեդրակյան և ընկերներ» ՍՊԸ-ի տնօրեն Հուսիկ Սեդրակյանի դիմումը՝ սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող, Վարսեր համայնք, Սևան-Երևան մայրուղի 27 / 5 հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ 16122021-05-0066/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզ,Վարսեր համայնք, Սևան-Երևան մայրուղի 27 / 5 հասցեում գտնվող 1.12308հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 3 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 0.36339հա մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի, 56-57կմ 4 / 1 ավտոտեխսպասարկման կետ հասցե;

2) երկրորդ միավոր գույքի՝ 0.61322հա մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի, 56-57կմ 4 / 2 ծածկ հասցե;

3) երրորդ միավոր գույքի՝ 0.14647հա մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի, 56-57կմ 4 / 3 ավտոտեխսպասարկման կայան հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 21
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2025 թվականի թիվ 833-Ա

### ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 02.04.2025Թ. N 694-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 02.04.2025թ. «Հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին» N 694-Ա որոշման 1-ին կետի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «Սևան համայնք, ք. Սևան, Շինարարների փողոց թիվ 5 / 31 ավտոտնակ» բառերի փոխարեն կարդալ «Սևան համայնք, ք. Սևան, Շինարարների փողոց թիվ 5 / 31 տնտեսական շինություն» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 21
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**21 ապրիլի 2025 թվականի թիվ 834-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Վոլոդյա Վարդանյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Ծաղկունք հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 941502, տրված՝ 05.10.2002թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Ծաղկունք հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծաղկունք 4-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 9 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 21
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**21 ապրիլի 2025 թվականի թիվ 835-Ա**

### ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Լևոն Մանուկյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, 4-րդ դպրոցի հարավային մաս հասցեում գտնվող հողամասի համար /վկայական՝ 1059110, տրված՝ 30.11.2004թ./ նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, 4-րդ դպրոցի հարավային մաս հասցեում գտնվող հողամասի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան Ք. Քըրքորյան փողոց թիվ 4 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 21
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**21 ապրիլի 2025 թվականի թիվ 836-Ա**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՎԼԱԴ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Վլադ Սարգսյանին 21.03.2006 թվականից վարձակալության իրավունքով պատկանող Սևան լճի թերակղզու անտառամերձ տարածքում գտնվող հողատարածքում առկա ինքնակամ շինությունների առկայության փաստը՝ պարզեցի. քաղաքացի Վլադ Սարգսյանը 2006 թվականին վարձակալակությամբ իրեն պատկանող տարածքում, խախտելով ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի 896 որոշման պահանջները, առանց տեղադրման թույլտվության, տարածքում տեղադրել է 3 հատ ոչ հիմնական շինություններ /վագոն-տնակներ/՝ առանց թաց շինարարական աշխատանքների: Հիմնավորվում է, որ շինությունները հանդիսանում են ինքնակամ տեղադրված: Հիմք ընդունելով, որ տվյալ հողատարածքը հանդիսանում է պետական սեփականություն հանդիսացող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող հողատարածք, ուստի ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Պահանջել քաղաքացի Վլադ Սարգսյանից /ք. Երևան, Մազմանյան փողոց թիվ 8շ., 16 բն./ ապամոնտաժել /քանդել/ տեղադրված ոչ հիմնական շինությունները:
2. Պահանջել քաղաքացի Վլադ Սարգսյանից տարածքում կառուցապատումը իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել երկու ամսվա ընթացքում ՀՀ վարչական դատարան:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 21
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**22 ապրիլի 2025 թվականի թիվ 837-Ա**

## «ԱՐԱՐԱՏ ՔԱՐԱՄՅԱՆ» ՍՊԸ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով «Արարատ Քարամյան» ՍՊԸ-ին վարձակալությամբ պատկանող հողատարածքում տեղադրված ոչ հիմնական շինությունների առկայության փաստը՝ պարզեցի. «Արարատ Քարամյան» ՍՊԸ-ն հողի վարձակալության պայմանագիր է կնքել «Սևան ազգային» պարկի հետ 27.05.2015 թվականին: «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը Սևանի համայնքապետարանին տեղեկացրել է, որ այդ տարածքում տեղադրված շինությունները ինքնակամ են: Հետագայում այդ մասին տեղեկացրել է նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազությունը: Այդ կապակցությամբ Սևանի համայնքապետարանի հանձնախումբը 22.04.2025 թվականին իրականացրեց տարածքի տեղազննում: Պարզվեց, որ տարածքում առկա են 8 հատ վագոն-տնակներ, 13 հատ փայտյա և մետաղական նյութերով պատրաստված տաղավարներ: Շինությունները տեղադրվել են առանց թաց շինարարական աշխատանքների: Հիմնավորված է նաև, որ այդ շինությունները տեղադրվել են ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 896 որոշման պահանջների խախտմամբ: Շինությունները տեղադրվել են առանց համայնքի ղեկավարի կողմից տրված տեղադրման թույլտվության և հանդիսանում են ինքնակամ տեղադրված շինություններ: ՍՊԸ-ի ներկայացուցիչը նշեց, որ շինությունները տեղադրվել են 2020-2021 թվականներին: Հաշվի առնելով, որ այդ հողատարածքը հանդիսանում է պետական սեփականության և ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Պահանջել «Արարատ Քարամյան» ՍՊԸ-ի տնօրեն Գրիգոր Քարամյանից ապամոնտաժել / քանդել/ հողատարածքում առկա շինությունները:
2. Պահանջել Գրիգոր Քարամյանից տարածքի կառուցապատումը իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել երկու ամսվա ընթացքում ՀՀ վարչական դատարան:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 22
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**22 ապրիլի 2025 թվականի թիվ 838-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 30.01.2025Թ. N 199-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝30.01.2025թ. «Ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N 199-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 22
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2025 թվականի թիվ 839-Ա

## «ՄԱՐԿ ՄԱՐԻ» ՍՊԸ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՌԱՓՆՅԱ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՊՕՐԻՆԻ ԶԱՎԹՄԱՆ, ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՓԱՍՏՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի, 2-րդ մասի ա) կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել՝ «Մարկ Մարի» ՍՊԸ-ին վարձակալության հիմունքով պատկանող հողատարածքի ապօրինի զավթման և ինքնակամ շինությունների տեղադրման փաստով հարուցված վարչական վարույթը:
2. Վարչական վարույթը վերսկսել դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել երկու ամսվա ընթացքում ՀՀ վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 22
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 ապրիլի 2025 թվականի թիվ 840-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008 ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Գայանե Ասատրյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Գայանե Ասատրյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սունդուկյան փողոց թիվ 14 հասցեում գտնվող 1680քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Գայանե Լևիկի Ասատրյանին /ծնված՝ 19.05.1965թ./ պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սունդուկյան փողոց թիվ 14 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 1680քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Գայանե Ասատրյանի սեփականության իրավունքը:
2. Գայանե Ասատրյանին պատկանող 1680քմ մակերեսով հողատարածքում 1957թ. կառուցված 10.32քմ մակերեսով նկուղի /ներքին մակերեսը՝ 8.97քմ/, 138.76քմ մակերեսով բնակելի տան /ներքին մակերեսը՝ 99.29քմ/, 112.04քմ մակերեսով օժանդակ շինության /ներքին մակերեսը՝ 82.29քմ/, 38.35քմ մակերեսով տնտեսական շինության /ներքին մակերեսը՝ 30.66քմ/, 57.01քմ մակերեսով անասնաշենքի /ներքին մակերեսը՝ 49.39քմ/, 7.45քմ մակերեսով պարսպի նկատմամբ ճանաչել Գայանե Լևիկի Ասատրյանի սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Գ.Սունդուկյան փողոց թիվ 14 բնակելի տուն հասցե:
3. Սեփականության իրավունքով Գայանե Ասատրյանին պատկանող 1680քմ մակերեսով հողատարածքում կառուցված 34.26քմ մակերեսով կիսաքանդ շինությունը /ներքին մակերեսը՝ 26.40քմ/ ճանաչել ինքնակամ շինություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

23 ապրիլի 2025 թվականի թիվ 841-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Մերրի Ալոյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Գագարին, Երիտասարդական փողոց թիվ 8 շենքի արևմտյան մասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 75.1քմ մակերեսով անասնաշենքն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**.

1. Մերրի Սամվելի Ալոյանի կողմից՝ ք. Սևան, գ. Գագարին, Երիտասարդական փողոց թիվ 8 շենքի արևմտյան մասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 75.1քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 64.51քմ/ և զբաղեցրած 75.1քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն՝ հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Մերրի Ալոյանի կողմից ինքնակամ կառուցված 75.1քմ մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023BFCJFE/՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Գագարին, Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 12 / 6 անասնաշենք հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 2-րդ կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 22
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 ապրիլի 2025 թվականի թիվ 842-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Արայիկ Իգնաթևոսյանի դիմումը՝ Սևան համայնք, գյուղ Լճաշեն, 1-ին փողոց թիվ 84 / 1 հասցեում կառուցված 11.23քմ մակերեսով պարիսպները և 273.1քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Լճաշեն, 1-ին փողոց թիվ 84 / 1 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 29.02.2024թ. թիվ 535-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 16.04.2025թ. պետական գրանցում ստացած 11.23քմ մակերեսով պարիսպները՝ 1քմ՝ 2056 դրամ, զբաղեցրած 273.1քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 792.0դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Արայիկ Իգնաթևոսյանին:
2. Քաղ. Արայիկ Բաբկենի Իգնաթևոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**23 ապրիլի 2025 թվականի թիվ 843-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 21.06.2024Թ. N 1423-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 21.06.2024թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1423-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00272հա մակերեսով հողամաս» բառերի փոխարեն կարդալ «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.02724հա մակերեսով հողամաս» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 ապրիլի 2025 թվականի թիվ 844-Ա**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Արտաշ Գրիգորյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 140 / 2-2 հասցեում գտնվող խանութին կից՝ ինքնակամ կառուցված 74.92քմ մակերեսով հասարակական նշանակության խանութը, 8.0քմ մակերեսով հարթակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**.

1. Քաղ. Արտաշ Գրիգորի Գրիգորյանի կողմից՝ ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 140/2-2 հասցեում գտնվող խանութին կից ինքնակամ կառուցված 74.92քմ մակերեսով հասարակական նշանակության խանութը /ներքին մակերեսը՝ 67.0քմ/, 8.0քմ մակերեսով հարթակը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 81.6քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ հասարակական կառուցապատման:
2. Արտաշ Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված 74.92քմ մակերեսով հասարակական նշանակության խանութը և 8.0քմ մակերեսով հարթակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023G5WEVJ/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 140 / 5 խանութ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 ապրիլի 2025 թվականի թիվ 845-Ա**

### ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Սամվել Մանուկյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, 4-րդ դպրոցի հարավային մաս հասցեում գտնվող հողամասի /վկայական՝ 1059109, տրված՝ 30.11.2004թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, 4-րդ դպրոցի հարավային մաս հասցեում գտնվող հողամասի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան Ք. Քըրքորյան փողոց թիվ 4 / 1 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 ապրիլի 2025 թվականի թիվ 846-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող 18.20634հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 22092020-05-0019 /, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի՝

1) առաջին միավոր գույք՝ 18.17164հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողամաս;

2) երկրորդ միավոր գույք՝ 0.03470հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողամաս:

2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 ապրիլի 2025 թվականի թիվ 847-Ա**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25, 27, 32 կետերով, հիմք ընդունելով քաղ. Աշոտ Բաղյանի դիմումը՝ ք. Սևան, Նաիրյան փողոց 175 բազմաբնակարան շենքին կից ինքնակամ կատարված բնակարանի շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ կատարված շինարարական աշխատանքների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 175 բազմաբնակարան շենքի սեփականատերերին անհատույց փոխանցվող հողատարածքի վրա Աշոտ Բաղյանի կողմից ինքնակամ կառուցված 15.7քմ մակերեսով բնակարանը /ներքին մակերեսը՝ 15.36քմ/ ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023ZMDVS8 /՝ համայնքի բյուջե մուծելով օրինականացվող շինությունների յուրաքանչյուր 1քմ-ի համար՝ 501.9 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Օրինական ճանաչել՝ ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 175 շենքում առկա ինքնակամ կառույցները:
4. Սույն որոշմամբ օրինականացված բնակելի նշանակության բնակարանի պետական գրանցումը հիմք է նաև զբաղեցրած հողամասի նկատմամբ շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության փոփոխության գրանցման համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 ապրիլի 2025 թվականի թիվ 848-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-004-0135-0001 կադաստրային ծածկագրով /ք. Սևան,/ 0.03000հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 ապրիլի 2025 թվականի թիվ 849-Լ**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, Սևան համայնքի ավագանու՝ 15.04.2025թ. « Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 17-ի՝ «Սևան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N170-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ կատարելու մասին» N40-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Սևան համայնքի 2025թվականի բյուջեի եկամուտների եռամսյա բաշխման համամասնությունները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Սևան համայնքի 2025թվականի բյուջեի ծախսերի եռամսյա բաշխման համամասնությունները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Սևան համայնքի 2025թվականի բյուջեի ծախսերի կատարման համապատասխան նախահաշիվները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի ապրիլի 23
ք.Սևան

Հավելված N1
Հաստատված է Սևան համայնքի ղեկավարի
23.04.2025թ. Թիվ849-Ա որոշմամբ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ

ՀԱՅ. ԴՐԱՄ

| Տող ի NN | Եկամտատեսակների անվանումները | տարի | այդ թվում ըստ եռամսյակների | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | I կիսամյակ | 9 ամիս | տարեկան |
| **Ա** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ** | **2202017.0** | **550504.3** | **1101008.5** | **1651512.8** | **2202017.0** |
| | այդ թվում՝ | | | | | |
| **1** | **ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** | **489730.0** | **122432.5** | **244865.0** | **367297.5** | **489730.0** |
| ***1*** | ***Գույքային հարկեր անշարժ գույքից*** | ***177300.0*** | ***44325.0*** | ***88650.0*** | ***132975.0*** | ***177300.0*** |
| 1.1.1. | Աշարժ գույքի հարկ | 167800.0 | 41950.0 | 83900.0 | 125850.0 | 167800.0 |
| 1.1.2 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 4500.0 | 1125.0 | 2250.0 | 3375.0 | 4500.0 |
| 1.1.3 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 5000.0 | 1250.0 | 2500.0 | 3750.0 | 5000.0 |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| **1.2** | **Գույքահարկ փոխադրամիջոցների համար** | **290000.0** | **72500.0** | **145000.0** | **217500.0** | **290000.0** |
| ***1.3*** | ***Տեղական տուրքեր*** | ***9930.0*** | **2482.5** | **4965.0** | **7447.5** | **9930.0** |
| 1.3.1 | քաղաքաշինության գծով | 900.0 | 225.0 | 450.0 | 675.0 | 900.0 |
| 1.3.2. | Առևտրի և սպասարկումների գծով | 9030.0 | 2257.5 | 4515.0 | 6772.5 | 9030.0 |
| **1.4** | **Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր, որից** | ***12500.0*** | **3125.0** | **6250.0** | **9375.0** | **12500.0** |
| 1.4.1 | ՔԿԱԳ բաժնի գծով | 3500.0 | 875.0 | 1750.0 | 2625.0 | 3500.0 |
| 1.4.2 | Նոտարական գրաս. գծով | 9000.0 | 2250.0 | 4500.0 | 6750.0 | 9000.0 |
| ***2.*** | ***Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից*** | ***1632470.0*** | **408117.5** | **816235.0** | **1224352.5** | **1632470.0** |
| 2.1 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա | 1603043.5 | 400760.9 | 801521.8 | 1202282.6 | 1603043.5 |
| 2.2 | Մուտքեր ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից՝ աշնանացան ցորենի արտադրութ. խթանման ծրագրի համար | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2.3 | Պետ. բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամ. նպ. հատ./սուբվենցիա/ | 29426.5 | 7356.6 | 14713.3 | 22069.9 | 29426.5 |
| ***3*** | ***ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*** | ***79817.0*** | **19954.3** | **39908.5** | **59862.8** | **79817.0** |
| **3,1** | **Գույքի վարձակալությունից եկամուտ** | **22090.0** | **5522.5** | **11045.0** | **16567.5** | **22090.0** |
| 3.1.1. | Համայնքի սեփ. համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 10000.0 | 2500.0 | 5000.0 | 7500.0 | 10000.0 |
| 3.1.2 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետ. սեփ. համարվող հողերի վարձ. վարձավ. | 5890.0 | 1472.5 | 2945.0 | 4417.5 | 5890.0 |
| 3.1.3 | Համայնքի վարչ. կար. գտնվող պետ. և համ. սեփակ. ժատ. հող. կառուց. իր. դիմաց գանձվող վարձավճարներ | 3200.0 | 800.0 | 1600.0 | 2400.0 | 3200.0 |
| 3.1.4 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 3000.0 | 750.0 | 1500.0 | 2250.0 | 3000.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| *3.2* | *Պետության կողմից ՏԻՄ պակ. լիազորութ. իրակ. ծախսերի ֆինան. համար ՊԲ ստացվող միջոցներ, որից ՔԿԱԳ պահ. ծախսեր* | *2227.0* | **556.8** | **1113.5** | **1670.3** | **2227.0** |
| ***3.3.*** | ***Վարչական գանձումներ,որից*** | ***55500.0*** | **13875.0** | **27750.0** | **41625.0** | **55500.0** |
| 3.3.1 | Տեղական վճարներ/աճուրդ,հասցե,փաստագր./ | 500.0 | 125.0 | 250.0 | 375.0 | 500.0 |
| 3.3.2 | Համ. վարչ. տար. ինք. կառ. շենքշինութ. օրինակ. համար վճարներ | 2500.0 | 625.0 | 1250.0 | 1875.0 | 2500.0 |
| 3,3,3, | Արտադպրոց. նախադպ. ՀՈԱԿ ուսումնակ. վճարներ | 7500.0 | 1875.0 | 3750.0 | 5625.0 | 7500.0 |
| 3,3,4 | Կենցաղային աղբահանութ. վճար | 45000.0 | 11250.0 | 22500.0 | 33750.0 | 45000.0 |
| | Այլ եկամուտներ/գարնանացան, լրավճ. ՆՈՒՀ, դաստ/ | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| ***Բ*** | ***ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ա/թ*** | ***1710000.0*** | **427500.0** | **855000.0** | **1282500.0** | **1710000.0** |
| 1 | Հողի իրացումից մուտքեր | 300000.0 | 75000.0 | 150000.0 | 225000.0 | 300000.0 |
| 2 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե | 610000.0 | 152500.0 | 305000.0 | 457500.0 | 610000.0 |
| 3 | Կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններից /ԳՄԶԳ/ | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4 | Կապիտալ սուբվենցիաներ /դրամաշնորհներ/ | 800000.0 | 200000.0 | 400000.0 | 600000.0 | 800000.0 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ*** | ***3912017.0*** | **978004.3** | **1956008.5** | **2934012.8** | **3912017.0** |

Հավելված N2

Հաստատված է Սևան համայնքի ղեկավարի
23.04.2025թ. Թիվ 849-Լ որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱ ԲԱՇԽՈՒՄԸ

| բաժին | խումբ | դաս | ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | տարի | այդ թվում ըստ եռամսյակների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | I եռամսյակ | I կիսամյակ | 9 ամիս | տարի |
| 01 | 1 | 1 | Համայնքի ղեկավարի աշխատակազմ | 402300.0 | 100575.0 | 201150.0 | 301725.0 | 402300.0 |
| 01 | 3 | 3 | ՔԿԱԳ բաժնի պահպանման գծով ծախսեր | 2227.2 | 556.8 | 1113.6 | 1670.4 | 2227.2 |
| 01 | 6 | 1 | Ընդանուր բնույթի հանրային ծառ, | 160889.8 | 40222.5 | 80444.9 | 120667.4 | 160889.8 |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 3000.0 | 750.0 | 1500.0 | 2250.0 | 3000.0 |
| 04 | 5 | 1 | Ճանապ. տնտես. գծով ընթացիկ ծախսեր/Ծաղկունքի ջր./ | 5000.0 | 1250.0 | 2500.0 | 3750.0 | 5000.0 |
| 05 | 1 | 1 | Սուբսիդիա <<ՍՀԿՍ և Բ>> ՀՈԱԿ | 400000.0 | 100000.0 | 200000.0 | 300000.0 | 400000.0 |
| 05 | 4 | 1 | Կենսաբազմազանության և բնության պաշտպանությաուն | 5000.0 | 1250.0 | 2500.0 | 3750.0 | 5000.0 |
| 06 | 1 | 1 | Բնակ. տնտես. գծով ընթացիկ ծախսեր | 8000.0 | 2000.0 | 4000.0 | 6000.0 | 8000.0 |
| **08** | **0** | **0** | **Մ Շ Ա Կ ՈՒ Յ Թ, այդ թվում** | **75600.0** | **18900.0** | **37800.0** | **56700.0** | **75600.0** |
| 08 | 2 | 1 | Սուբսիդիա ,, ԳԿՀ,, ՀՈԱԿ | 23000.0 | 5750.0 | 11500.0 | 17250.0 | 23000.0 |
| 08 | 2 | 3 | Սուբսիդիա "ՀՄԿ>> ՀՈԱԿ | 36000.0 | 9000.0 | 18000.0 | 27000.0 | 36000.0 |
| 08 | 2 | 4 | Մշակութային միջոցառումների կազմակերպման գծով ծախսեր | 6000.0 | 1500.0 | 3000.0 | 4500.0 | 6000.0 |
| 08 | 3 | 1 | Տեղեղեկատ. ծառ. ձեռք բերում՝ | 5500.0 | 1375.0 | 2750.0 | 4125.0 | 5500.0 |
| 08 | 3 | 2 | Ընթացիկ դրամ. հրատարակչություն. խմբագրություններին | 2100.0 | 525.0 | 1050.0 | 1575.0 | 2100.0 |
| 08 | 4 | 2 | Նվիրատվություններ ՀԿ | 3000.0 | 750.0 | 1500.0 | 2250.0 | 3000.0 |
| **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, այդ թվում** | **504000.0** | **126000.0** | **252000.0** | **378000.0** | **504000.0** |
| **09** | **1** | **0** | **Նախադպրոցական կրթություն, որից** | **368000.0** | **92000.0** | **184000.0** | **276000.0** | **368000.0** |
| 09 | 1 | 1 | Սուբսիդիա թիվ 1 "Բողբոջ" մ/մ ՀՈԱԿ | 48000.0 | 12000.0 | 24000.0 | 36000.0 | 48000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբսիդիա թիվ 2"Զարթոնք" մ/մ ՀՈԱԿ | 53000.0 | 13250.0 | 26500.0 | 39750.0 | 53000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբսիդիա թիվ 3 " Հեքիաթ" մ/մ ՀՈԱԿ | 62000.0 | 15500.0 | 31000.0 | 46500.0 | 62000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբսիդիա թիվ 4 " Գալիք" մ/մ ՀՈԱԿ | 46000.0 | 11500.0 | 23000.0 | 34500.0 | 46000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբսիդիա Գագարինի մ/մ ՀՈԱԿ | 21000.0 | 5250.0 | 10500.0 | 15750.0 | 21000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբ. "Վարսերի մանկապարտեզ" ՀՈԱԿ | 20000.0 | 5000.0 | 10000.0 | 15000.0 | 20000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբ. "Լճաշենի մանկապարտեզ" ՀՈԱԿ | 36000.0 | 9000.0 | 18000.0 | 27000.0 | 36000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբ. "Զովաբերի մանկապարտեզ" ՀՈԱԿ | 13000.0 | 3250.0 | 6500.0 | 9750.0 | 13000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբ. "Դդմաշենի մանկապարտեզ" ՀՈԱԿ | 28000.0 | 7000.0 | 14000.0 | 21000.0 | 28000.0 |
| 09 | | | Սուբ. "Ծովագյուղի մանկապարտեզ" ՀՈԱԿ | 31000.0 | 7750.0 | 15500.0 | 23250.0 | 31000.0 |
| 9805 | 1 | 1 | Սուբսիդիա "Չկալովկայիմանկապարտեզ" ՀՈԱԿ | 10000.0 | 2500.0 | 5000.0 | 7500.0 | 10000.0 |
| **09** | **5** | **1** | **Արտադպրոցական դաստիարակություն, որից** | **136000.0** | **34000.0** | **68000.0** | **102000.0** | **136000.0** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 09 | 5 | 1 | Սուբսիդիա,, Մանկապատանեկան մարզադպրոց,, ՀՈԱԿ | 54000.0 | 13500.0 | 27000.0 | 40500.0 | 54000.0 |
| 09 | 5 | 1 | Սուբ.,, Երաժշտական դպրոց,, ՀՈԱԿ | 41000.0 | 10250.0 | 20500.0 | 30750.0 | 41000.0 |
| 09 | 5 | 1 | Սուբսիդիա "Արվեստի դպրոց,, ՀՈԱԿ | 28000.0 | 7000.0 | 14000.0 | 21000.0 | 28000.0 |
| 10 | 5 | 1 | Լճաշենի <<Մանկական Արվեստի դպրոց'>> ՀՈԱԿ | 13000.0 | 3250.0 | 6500.0 | 9750.0 | 13000.0 |
| 10 | 7 | 1 | **Սոցիալական հատուկ արտոնություններ, որից՝ նպաստներ բյուջեից** | **26000.0** | **6500.0** | **13000.0** | **19500.0** | **26000.0** |
| 11 | 1 | 2 | Վարչ. Բյուջեի պահուստային ֆոնդ ա/թ | 610000.0 | 152500.0 | 305000.0 | 457500.0 | 610000.0 |
| 11 | 1 | 2 | Վարչական բյուջեի պահ. ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | | | | **2202017.0** | **550504.3** | **1101008.5** | **1651512.8** | **2202017.0** |
| | | | | | | | | |
| 01 | 1 | 1 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսեր | 15000.0 | 3750.0 | 7500.0 | 11250.0 | 15000.0 |
| 01 | 6 | 1 | Ընդանուր բնույթի հանրային ծառայութ, | 113000.0 | 28250.0 | 56500.0 | 84750.0 | 113000.0 |
| 04 | 2 | 1 | Ջրամատակարարման ծախսեր | 268000.0 | 67000.0 | 134000.0 | 201000.0 | 268000.0 |
| 04 | 5 | 1 | Ճանապարհային տնտեսություն՝ փոսային հիմնանորոգում ընդամենը, որից | 1276591.0 | 319147.8 | 638295.5 | 957443.3 | 1276591.0 |
| 04 | 5 | 1 | Ճանապարհային տնտեսության գծով նախագծահետազոտական աշխատանքներ | 30000.0 | 7500.0 | 15000.0 | 22500.0 | 30000.0 |
| 05 | 2 | 1 | Կեղտաջրերի հեռացման գծով ծախսեր | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 05 | 4 | 1 | Կենսաբազմազանության և բնության պաշտպանությաև | 5000.0 | 1250.0 | 2500.0 | 3750.0 | 5000.0 |
| 06 | 1 | 1 | Բնակարանային տնտեսություն | 87000.0 | 21750.0 | 43500.0 | 65250.0 | 87000.0 |
| 08 | 0 | 0 | Մշակութային ծառ./ մշ. տան կառուցում/ | 86000.0 | 21500.0 | 43000.0 | 64500.0 | 86000.0 |
| 08 | 0 | 1 | Ժամանակակից թվային, ձայնային և արևային վահանակներով աշխատող լուսակիրների ձեռք բերում և տեղադրում | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| ***ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ*** | | | | **1850591.0** | **462647.8** | **925295.5** | **1387943.3** | **1850591.0** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ** | | | | ***4052608.0*** | **1013152.0** | **2026304.0** | **3039456.0** | **4052608.0** |